Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը)	**ԿԱԴԱՍՏՐ** **(7.20ԳԴ2016)**
ECTS կրեդիտ	4 կրեդիտ
Դասընթացի պատասխանատու դասախոս	Գյուրջյան Ն., տ.գ.թ., ասիստենտ
Ուսումնառության վերջնարդյունքներ	Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի. *(գիտելիք և իմացություն)* • ներկայացնել կադաստրի պետական կոմիտեի կառուցվածքն ու գործառույթները, • ներկայացնել անշարժ գույքի կադաստրի վարման առանձնահատկությունները, • նկարագրել կադաստրի տեսակները, • պարզաբանել ավտոմատացված համակարգերի ներդրման նշանակությունը, • ներկայացնել կադաստրի վարման միջազգային փորձը, *(կարողություններ)* • կիրառել դասընթացի արդյունքում ձեռք բերած գիտելիքները ավտոմատացված համակարգերում, • համեմատել ՀՀ կադաստրի և մի քանի այլ առաջատար երկրների կադաստրի վարման փորձը, ներկայացնել առաջարկություններ ՀՀ կադաստրի համակարգում բարեփոխումներ կատարելու համար, • կատարել կադաստրի համակարգի գործունեության վերլուծություններ:
Դասընթացի թեմատիկ ծրագիր	• «Կադաստր»-ի ուսումնասիրություններն ու մեկնաբանությունները՝ տարբեր տեսանկյուններից և մեթոդաբանությամբ: • Հողակադաստրային համակարգերի դասակարգում: Կա-դաստրի տեսակները: • Հողի և անշարժ գույքի պետական կադաստրի վարման ավտոմատացված համակարգի ներդրման նպատակը, խնդիրներն ու սկզբունքները: Ավտոմատացված համակարգի ձևավորումը:

	• Հողային պաշարների կառավարման տնտեսական մեխանիզմները: Կառավարման ավտոմատացված համակարգերի կիրառմամբ պետական գրանցման վարույթի իրականացումը: • Իրավական (իրավաբանական) հողային կադաստր: Իրավաբանական կադաստրը կարգավորող օրենսդրական, նորմատիվ իրավական ակտերն ու որոշումները: • ֆիսկալ (հարկային) հողային կադաստր, բազմա-նպատակային կադաստր: Ներկայումս ֆիսկալ կադաստր վարող մարմինը ՀՀ-ում: • Ջրային պետական կադաստրի առաքելությունը, ներկան և զարգացման ուղիները: • Անտառային պետական կադաստր, դրա վարման կարգ: • Ստորգետնյա տարածքների կադաստր: Ստորգետնյա տարածքների կադաստրի վարման գործող կարգը: Դրա վարման առանձնահատկությունն ու կարևորությունը: • Երևան քաղաքի ստորգետնյա տարածությունների ցուցակի կազմումը որպես ստորգետնյա տարածությունների կադաստրի վարման փուլ: • Ինտեգրված կադաստր: Ինտեգրված կադաստրի ներդրման անհրաժեշտությունը, առավելություններն ու առանձնահատկությունները: • Ինտեգրված կադաստրի ներդրման փուլերը ՀՀ-ում: Միջազգային փորձը ինտեգրված կադաստրի կիրառության մեջ: • Հողակադաստրային համակարգերի էֆեկտիվություն: • ՀՀ-ում կադաստրի ներկա վիճակը և զարգացման հեռանկարները: • Մի շարք ԱՊՀ և Եվրոպական երկրների կադաստրի վարման առանձնահատկությունները: • Տեսական դասընթացի ամփոփում:
Դասընթացի գրականության ցանկ	• ՀՕ-185 - ՀՀ Հողային օրենսգիրք: • Եզեկյան Ա.Ս., Էֆենդյան Պ.Ս. Հողային կադաստր: Երևան, 2008թ., 288 էջ: • Ստեփանյան Ս.Շ., Հովհաննիսյան Վ.Փ., Գրիգորյան Ա.Լ. Անշարժ գույքի էկոնոմիկա և կառավարում: Երևան, 2007թ., 586 էջ:

	• ՀՕ-239 - Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք: • ՀՕ-247-Ն - ՀՀ Սահմանադրություն: 2011թ. հուլիսի 19-ի «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենք: • Անտառային պետական կադաստրի վարման եվ անտառների պետական հաշվառման ու տվյալների տրամադրման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարություն որոշումը, 7 փետրվարի 2008 թվականի N 133-Ն [http://www.irtek.am/views/act.aspx?aid=-42321] • Ատենախոսությունը: Ստորգետնյա տարածությունների կադաստրի վարման կազմակերպումը ՀՀ-ում http://ysu.am/files/10.%20COMPILATION%20OF%20A%20LIST%20OF%20 UNDERGROUND%20SPACES%20AS%20A%20STAGE%20OF%20CADSTER%20OF%20UNDERGROUND%20SPACES.pdf